

ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁ

Ա. Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հովհաննես Դրասխանակերտցին հորենացու Տիգրան Միջինի (պատմական Տիգրան Մեծ) պատմությունը վերաշարադրելիս Տիգրանի ժեռալը՝ Միհրդատի մասին խոսելիս ընդարձակ մի էքսկուրս է անում, որ նրա աղբյուրը չունի Այդունդ պատմվում է Պոնտական Ամասիա քաղաքը Միհրդատի կողմից գրավվելու, վերաշինվելու, այդ առիթով քաղաքի հիմնադրման պատմության, Պոմպեոսի և Միհրդատի ընդհարվելու, վերջինիս մահվան մասին¹։ Համաձայն յաջահայտ աղերս ունի մատենագրական մի փոքրիկ գրվածքի հետ, որը մեղ է հասել Պոնտական Ամասիայում գործած Թեոդորոս Զորավարի վարրին կից՝ «Կյուրյոս»²։ Այս հագել մեկ էջ զբաղեցնող գրվածքը բուն վարրից շեղտակի առանձնանում է լեզվի և ոճի յուրահատկությամբ, պատմական և աշխարհագրական նյութի առատությամբ և, որպես այդպիսին, վարրի հետ փաստորեն որևէ ներքին կապ չունեցող մատենագրական միավոր է։ Բացի Դրասխանակերտցու վերահիշյալ հատվածից, «Ամասիա քաղաքի պատմությունը» (այսուհետև համառոտ կկոչենք ԱՔՊ) առնչության բացահայտ եզրեր ունի նաև հորենացու Պատմության հետ։ Այնպես, այն համարում է զգուշ հորենացուց գրչին թափուած³։ Այս երեք հուշարձանների հարաբերությունների հարցին մի հոգվածով անդրադարձել է Ն. Անդրիկյանը⁴։

Դրասխանակերտցու, հորենացու և ԱՔՊ-ի համապատասխան հատվածների համադրումը ունի այսպիսի պատկեր (զուգադրությանը հետևելը դուրացնելու համար այն պայմանականորեն բաժանում ենք մասերի՝ հերթական համարներով)։

Դրասխանակերտցի

հորենացի

ԱԲՎ

[1]

Ի ժամանակին, յորում Մակեդոնացին Աղեքսանդր Փիլիպպիան կոչեցեալ բազմաբիրովք անաստածութեան տիեզերակայեացն, Ամասիա ոմն եղբայր ներտաներեալ հօր Աղեք-

¹ Տե՛ս Մովսիսի հորենացու Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան և Ս. Յաւութիւնեան. Տփղիս, 1913, էջ 127—130; Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 28—30 (այսուհետև հղումներն այս հրատարակություններին կտանք ընդդրում, համապատասխանաբար Խ և Դ սկզբնատառերով)։

² Առաջին անգամ հրատարակվել է «Պատմութիւն Ամասիա քաղաքի և յաղազս սենդեան և վարուց սրբոյն Թեոդորոսի Զորավարին», վերնագրով «Սոփերք Հայկական»-ում (ԺՁ, էջ 55—80)։

³ Ղ. Ալիշան. Արշալույս քրիստոնեության Հայոց. Վենետիկ, 1902, էջ 166 (հմմտ. ճշմանի՝ Հայապատմ. Բ, էջ 42, ծան. 1)։

⁴ Ն. Անդրիկյան. Դիտողություն մը Պատմութիւն Ամասիա քաղաքի գրութեան վրա, — «Բազմավեպ», 1905, էջ 441—448 (այսուհետև՝ Անդրիկյան)։ Օգտագործում ենք սույն հոդվածում եղած բնագրի հրատարակությունը։

[2] Իսկ զկնի Արտաշիսի թագաւորէ երկրորդն Տիգրան՝ որդի նորուն։ Սա գումարտակ բազում ընդդէմ Յունականացն՝ ի վերայ եկելոցն նորա, կազմեալ ի վերջ կոյս զնոսա նահանջէր։

Եւ ի քեռայր Խր Միհրդատ զՄիժակ և զայլ Միշերկրեայսն հաւատացեալ՝ դառնայ յաշխարհս իւր։

[3] Այս Միհրդատ երթայ ունի ևս և զԱմասիայ, որ բազում ամօք յառաջ շինեալ էր յԱմասեայ եղբորորդւոյ Նեքտանիբայ հրամանաւ Աղէք-

Յետ Արտաշիսի Առաջնոյ թագաւորէ Տիգրան որդի նորա... Եւ ժողովեալ զգօրս Հայոց ընդդէմ երթայ զօրացն Յունաց, որք... դիմեալ գային յաշխարհս մեր... արգելեալ ի վերջ նահանջէ։

Եւ ի քեռայր իւր Միհրդատ հաւատացեալ զՄածաք և զհոգրս Մէշերկրայցն... դառնայ յաշխարհս մեր։

սանդրի հատուածեալ յԵգիպտոսէ ել ի Մէշերկրեայ, ի կողմն Գամրական Պոնտոսի առ Երկրորդն կոչեցեալ Հայովք, առ որս հոսի Գայլ գետ ընդ մէջ քարանձաւաց լեռանց անցանելով հանդգնագոյնս և այնպէս իջանէ ի Պոնտոս Պողեմոնական ընդ Թեմեսկիւռին դաշտ յանտառախիտ ծովեզերին, որ առ գետեզերքն, ժամանէ ի տեղին, որ կոչի Մարմառիդոն, սկիզբն առեալ ի Պոնտոսէ ի քարալեռանց։ Դադարեալ ազդ առնելով Աղեքսանդրի, հրաման ընդունի բնակիլ ի նրմին տեղւոջ, զոր քաղաք շինեալ իւրովք ծառայիք և ժողովրդովք բնակէր, յիւր առնուն կոչեցեալ Ամասիա։

Իսկ յետ բազում ժամանակաց Միհրդատ քեռայր Տիգրանայ Հայոց արքայի, կողմնապետ գոլով աներոյ իւրոյ ի Միժակ քաղաքի, որ այժմ կոչի Կեսսարիա, գայ ունի զԱմասիայ,

սանդրի՝ որդույ նեք-տանիրայ, և լրնդար-ձակագոյնս ղնա պա-րրսողեաց. և գրաւելով ղնա ի Հայս՝ տիեղե-րասահման քաղաք ղնա յարդարեալ կո-չէ: Շինէ ի նմա և արբունիս րստ հիւսի-սոյ կողմանէ Ռիս գե-տոյ:

Իսկ յարևելից դիմակի քարանձաւին շիրիմս քարակոյս և առնս բրածոյս յօրինէ հա-մանման ձևակերտին Շամիրամայ, որ ի վան և ի Խաղնաթ Գիդիայ:

[4] Բայց Տիգրան ցնտ բազում կարգաց և յօրինուածոց իւրոց դիմէ ի վերայ Պա-զեստինայ՝ առեալ գե-րի բազում ի Հրէից:

[5] Յայնժամ ապա Պոմպէոս Հռոմայեցի գալ հասանէ ի վերայ Միհրդատայ. որ թէ-պէտև ահագին մար-տրս ընդդէմ նորա գումարտակ ղնէր, սա-կայն հաղթեալ ի բազ-մութենէն՝ փախստա-կան ի կողմանս Պոն-տոսի անկանէր:

Եւ նոյն հետայն դի-մէ յաշխարհն Պաղես-տինացոց... առեալ գերի բազում ի Հրէ-ից... (Խ-Բ, ԺԴ, 127—128):

Յայնժմ ժամանակի Պոմպէոս Հռոմայեց-ոց զօրաւար զօրօք բազմօք եկեալ հա-սեալ ի Միքերկրեայս... Իսկ Պոմպէի պատե-րազմեալ ընդ Միհրդ-դատայ՝ տեսանէ սաս-տիկ ընդդիմակացու-թիւն և ահագին մար-տրս, և վտանգի յոյժ. սակայն բազմութեան յաղթեալ՝ փախստա-կան լինի Միհրդատ ի

կողմանս Պոնտոսի: Ի Հայս գրաւեալ տիեզերասահման ա-կալ քաղաք յարդա-րեաց, ընդարձակա-գոյնս պարսպեաց առ կատարով լեռանցն քերկոցունց կողմանց գետոյն: Շինեալ և զարքունիս քստ հիւ-սիսոյ կողմանն գե-տոյն առ ստորո-տով քարալեռնա-կին. և նախ ասլա-ռաժիւք մեծամեծ հաստաւիգ կանգնեալ վիմօք, և ի վերայ զարքունիսն կարգեալ. և յարեցակնային դի-մի անձաւին շիրիմս քարակոյս և ճանա-պարհս սանդիսաձևս և տունս քարայրս գանձուց բրածոյս յօ-րինեալ համանման ձևակերտացն Շամի-րամայ որ ի վան և ի Խաղնաթկեփայս: Զորս լցեալ գանձիւք՝ տիրեաց ոչ սակաւ ամս

մինչև ի գալն Պոմպէի:

Ընդ որ մարտուցեալ և պարտեալ Միհրդա-տայ և անկեալ ի Պոն-տոս, մեռանի ի Սի-նօսլ:

Իսկ Պոմպէի առեւակ զՄիթակ և կալեալ իղորդէին Միհրդատայ՝ զմանուկն Միհրդատ ըստ անուան հօր իւրոյ, զփախստականն Միհրդատ ի ձեռն խարդաւանութեան հօրըն Պիղատոսի սպանանէ թունաւոր դեղովը... (Դ-28-29):

[6]

Յորմէ իբրև զերծեալ Պոմպէոս, որում ակն ոչ ունէր, և առեւակ զՄաթաք և կալեալ զորդի նորա զըՄիհրդատ... և ի ձեռն հօրն Պիղատոսի Պոնտացւոյ զՄիհրդատ սպանանէ թունաւոր դեղովը (Խ. Բ. ԺԵ, 129—130):

Իսկ Պոմպէի առեւակ զգանձն յԱմասիայէ և զյուլիս ի բնակչաց փոխեալ, շինէ քաղաք յիւր անուն կոչելով Պոմպէուպոլիս: Բայց և զԱմասիա կալեալ ի նախագահութեան Եղեսպոնտոսի մետրոպոլիս արարեալ...

Ն. Անդրիկյանը վերոհիշյալ իր հոգւածում նախ աշխատում է բացահայտել խորհնացու Պատմութեան և ԱՔՊ-ի փոխհարաբերութիւնները: Լեզվական, ոճական ու բառական նմանութիւնների կողքին նա արձանագրում է դեպքեր, երբ երկու բնագրերը համընկնում են նաև իրենց հաղորդած փաստական պատմական և աշխարհագրական նյութով: Հոգւածագրի գնահատմամբ «Ամասիա քաղաքի պատմութեան ոչ միայն լեզուն, այլ և աշխարհագրութիւնն ու ամբողջ բովանդակութիւնը մեծ աղերս ունի խորհնացւոյ հետ, առանց որուն հայ մատենագրութեան մեջ անհասկանալի պիտի մնար այս գրվածիկը»⁵: Սակայն դրանց կողքին նկատի ունենալով նաև ԱՔՊ-ի այն պատմական տեղեկութիւնները և աշխարհագրական անունները, որոնք չունի խորհնացու Պատմութեանը, Անդրիկյանը գալիս է հետևյալ վերջնական եզրահանգման. «Շատ կետեր կան, որոնք կցուցանեն, թե խորհնացւոյ հետ մեծ աղերս ունի, ուրիշ կետեր ալ կան ընդհակառակն, որ կցուցանեն, թե անոր ազդեցութեան ազատ է: Իրաց այս վիճակին մեջ ստիպված ենք ռաիշ հաստատակաց աղբյուր մը եկթաղբել»⁶ (ընդգծումն իմն է—Ա. Ս.):

Ման մի վիճակ, իրոք կարող էր ստացվել, երբ երկու հեղինակներ իրարից անկախ օգտվելով նույն աղբյուրից, յուրաքանչյուրը քաղեր իրեն անհրաժեշտ նյութը: Նկատենք, սակայն, որ սա միակ իրավիճակը չէ, որ կարող էր նման բացատրութիւն ստանալ: Ի՞նչը կխանգարեր նման մի ենթադրութեան, եթե, օրինակ, խորհնացին այլ տեղերում հիշատակած լիներ այն աշխարհագրական անունները (Խազնաթկեփայս, Գայլ գետ, Պոնտոս Պողեմոնական, Թեմիսկիւռոն), որոնք Անդրիկյանը հատկապես շեշտում է՝ որպէս տարբերութիւն: ԱՔՊ-ի ծավալը և պարունակած նյութը այնպիսին է, որ խորհնացին ենթադրված ընդհանուր աղբյուրից կարող էր նաև ինքը այդ ամբողջը նույնութեամբ քաղել, և նրանց մեջ ընդհանրապես որևէ տարբերութիւն չէր լինի: Ի՞նչ պետք էր ենթադրել այդ դեպքում: Կամ՝ Դրասխանակերտցուց համադրված հատվածը նույնպէս ԱՔՊ-ի հետ բացահայտ նմանութիւնների

⁵ Նույն տեղում, էջ, 446:

⁶ Նույն տեղում, էջ 447:

կողքին ունի նաև տարրերություններ. ինչո՞ւ Անդրիկյանը ընդհանուր աղբյուր չի ենթադրում նաև այս դեպքում, այլ կարծում է, թե Դրասխանակերտցին օգտվում է անմիջապես ԱՔՊ-ից⁷։ Այժմ պատկերացնենք, որ Խորհնացու Պատմությունը նախապես պարունակել է մի հատված, որի վրա կարելի էր կառուցել ԱՔՊ-ն, իսկ հետագայում այդ հատվածը դուրս է ընկել։ Կստացվեր նույն պատկերը. այդպիսի մի հատվածի հետ, բնականաբար, դուրս կմնային նաև հատուկ անուններ, որոնց մի մասը կարող էր օգտագործված լինել միայն մեկ անգամ՝ այստեղ։ Հատկապես այս դեպքում, երբ խոսքը վերաբերում է բուն Հայաստանից դուրս գտնվող քաղաքի պատմության մի դրվագի, դա շատ հնարավոր կլիներ։ Ուրեմն, բնագրերի ծագումնաբանությունը պարզելու համար ոչ այնքան կարևոր են դրանց նմանությունները և տարրերությունները վկայող փաստերը, որքան դրանց բնույթը և էությունը։ Նման հայեցակետով բնությունը, կարծում ենք, բերում է հենց այս վերջին ենթադրության։ Ներկայացնենք մեր ունեցած փաստերն ու բացատրությունները։

ա) Ն. Անդրիկյանը Խորհնացու Պատմության և ԱՔՊ-ի համար որպես ընդհանուր աղբյուր ենթադրում է աշխարհագրական բնույթի մի գործ՝ «շատ ավելի ընդարձակ բան ինչ որ հատ մը մեղի հասած է, որուն մասն կազմած ըլլա Ամասի» քաղաքի պատմությունը⁸։ Այսինքն, այդ ենթադրյալ աղբյուրը պետք է նաև Խորհնացուն տրամադրած լիներ այն ամբողջ նյութը, ինչ ներկայանում է ԱՔՊ-ի միջոցով։ Դա հետևյալն է. Աղեքսանդր Մակեդոնացու «տիեզերակալություն» ժամանակ, նրա հրամանով Եգիպտոսից հյուսիս է շարժվում Նեբաանեբոսի եղբայր Ամտսիան, անցնում է Միջերկրայքով, Երկրորդ Հայրով դեպի Գամրական Պոնտոս։ Նույն Աղեքսանդրի հրամանով կանգ է առնում, քաղաք հիմնում և կոչում իր անունով [1]։ «Յետ բազում ժամանակաց» Հայոց Տիգրան Միջին թագավորի օրոք Մաժարում կողմնապետ նշանակված Միհրդատը այս քաղաքը գրավում է թի Հայս» [2], վերաշինում և դուրձնում «տիեզերասահմանակալ» քաղաք։ Այն մնում է Հայոց իշխանության տակ «ոչ սակաւ ամս» և լցվում գանձերով։ Ապա Միհրդատը պարտություն է կրում Պոմպեոսից և Ամասիան անցնում է հաղթողին [3—4]։ Պոմպեոսը թալանում է գանձերը, իր անունով կառուցում Պոմպեոպոլիս քաղաքը, այստեղ վերաբնակեցնում Ամասիայի բնակիչներից շատերին։ Սակայն դրանից հետո էլ Ամասիան չի անջքանում, և նույն Պոմպեոսն այն դարձնում է Հելլենսպոնտոսի մայրաքաղաք [6]։

Հայոց պատմության հատկապես հին շրջանի համար Խորհնացու ձեռքի տակ սահմանափակ բանակությամբ նյութ է եղել։ Նա մեղմաշան աշխատանքով տարբեր տեղերից քաղել, քննել և խոսեցրել է ամենաանշան տեղեկություններն ու ակնարկներն անգամ, դրանք իրար հետ համաձայնեցրել ու դրանցով կառուցել իր Պատմությունը⁹։ Տիգրան Միջին—Միհրդատ—Պոմպեոս եռյակի մասին նրա հաղորդումների ոգուն շատ հարազատ այս պատմությունը նույնիսկ լրացուցիչ մշակման կարիք չի զգում։ Դժվար է պատկերացնել, որ Հայոց պատմության հետ այսքան սերտ կապված նմանօրինակ մի նյութ ունենալով, Խորհնացին անհրաժեշտ չհամարեր օգտագործել։

բ) Արդեն առիթ է եղել խոսելու այն մասին, որ Խորհնացին մեծ տեղ է տվել պատմական անձերի շինարարական գործունեությանը։ Բոլոր այսպիսի դեպքերում նրա լեզուն հատկապես ճոխ է, պատկերները հարուստ և կենդանի, համեմատությունները դիպուկ և գեղեցիկ։ Ունեցած տեղեկությունների

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 445։

⁸ Նույն տեղում, էջ 448։

⁹ Հայտնի է, օրինակ, թե ինչպես Փավստոսի մի վկայության վրա հենվելով նա հաշվա-կանադրել է պարթևական զորքերի նրուսագեմ կատարած արշավանքի մասին Հովսեփոս Փլու-րիոսի պատմությունը (տե՛ս Գ. Ս ա ր գ ա յ ա ն, Մովսես Խորհնացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965 էջ 138—142)։

շրջանակներում այսպիսի նյութերը ներկայանում են հիմնականում նույն կաղապարում. ով և ինչպիսի հանգամանքներում է հիմնադրել քաղաքը. աշխարհագրական դիրքը, տեղանքը, կարևոր շինությունները, վերաշինման փաստերը և այլն: Որպես այդպիսին Ամասիա քաղաքի հիմնադրման և վերաշինման այս պատմությունը «սիրելի իսկ նորա ախորժակացն է. առաւել ևս սովորութեանցն»:

գ) ԱՔՊ-ի առաջին տողերում կա բացատրության կարոտ մի ձևակերպում. «Ի ժամանակին, յորում Մակեդոնացին Աղեֆսանդր Փիլիպպեան կոչեցեալ բազմաբիրովք անաստուածութեան տիեզերակալեացն, Ամասիա ոմնեղբաւր նեփաւեբայ հօր Աղեֆսանդրի...»: Ունենք «Աղեքսանդր Փիլիպպեան», որ պետք է հասկանալ. Փիլիպպոսի որդի Աղեքսանդր, և մյուս կողմից էլ Աղեքսանդրի հայր է համարվում Նեքտանեբոսը: Անհասկանալի է. թե ինչպես այդ նույն տողերի մասին Անդրիկյանը գրում է, թե ԱՔՊ-ն Աղեքսանդրի հայր է ճանաչում Նեքտանեբոսին, առանց բացատրելու այստեղ Փիլիպպոսի անվան առկայությունը¹⁰:

Հայտնի է, որ Մակեդոնացու հայրը իրականում եղել է Փիլիպպոսը: Բայց պատահական չէ նաև Նեքտանեբոսի անունը: Կեղծ Կալիսթենեսի «Վարք Աղեքսանդրի» վեպը, որ գիտնականների կարծիքով ստեղծվել է Աղեքսանդրի քաղաքի միջավայրում, նպատակ է ունեցել քաղաքացիություն տալ մի վարկածի, որ իբր Աղեքսանդրը Եգիպտոսի վերջին թագավոր Նեքտանեբոսի որդին է¹¹: Ուրեմն, զարմանալի չէ, որ նրանց երկուսի մասին էլ կարող էր խոսք լինել որպես Մակեդոնացու հոր: Բայց կասկածից դուրս է նաև, որ նման դեպքում որևէ հեղինակ նրանց երկուսին էլ չէր կարող Աղեքսանդրի հայր կոչել և նախապատվությունը շտար մեկին, իսկ մյուսին ժխտել, կամ արտահայտել իր թերահավատությունը: Այսպիսի վիճակ գտնում ենք խորենացու Պատմության մեջ: Պատմահայրը վստահ գիտի պատմական իրականությունը. «Յետ տիրելոյն ամենայն տիեզերաց Աղեֆսանդրի Մակեդոնացոյ, որդոյ Փիլիպպեայ և Ողոմպիադայ... (Խ., Բ, Ա, 102). Իսկ Տիգրան Միջինի հոր՝ Արտաշեսի մասին պատմող գլխում մի առիթով հիշատակելով Նեքտանեբոսի անունը, ծանոթագրում է. «Եւ է Նեքտանեբոսս այս վերջին թագավոր Եգիպտացոց, ի Մանեթոսէ պատմեալ, զոր ոմանէ հայր Աղեֆսանդրի ասացին» (Խ., Բ, ԺԳ, 124): Տաշյանը իրավացիորեն նկատում է, որ խորենացին նկատի ունի Կեղծ Կալիսթենեսի «Աղեքսանդրի վարքը», որ, բոլոր Տաշյանի, թարգմանել է հենց ինքը, և ավելացնում. «Խոսելու այս կերպը կցուցանե միանգամայն, որ շատ հարգ չէր դնել խորենացի Կալիսթենեա այս խոսքին»¹²: Այսպիսով, խորենացուն քաջ ծանոթ է Աղեքսանդր—Փիլիպպոս—Նեքտանեբոս խնդրը, և նա դրա մասին ունի իր որոշակի պատկերացումը: Ինչպես տեսնում ենք, նույն խնդիրն է առկա նաև ԱՔՊ-ի մեջ: Այսինքն, ԱՔՊ-ի համար հիմք հանդիսացած հատվածում խորենացին երկրորդ անգամ է անհրաժեշտություն ունեցել հիշատակելու այս եղանակը և, բնականաբար, պետք է նորից արտահայտել իր նույն վերաբերմունքը: Մակայն ԱՔՊ-ի մեջ ոչ միայն այդ չի երևում, այլ նույնիսկ հակառակ պատկերացումն է առաջանում: Կարծում ենք, խորենացու մեր ենթադրած հատվածում նախապես կարևոր խաթարում է եղել: Այն մի կողմից ունեցած պետք է լինել «Մակեդոնացին Աղեքսանդր Փիլիպպեայ», մյուս կողմից՝ «Ամասիայ ոմն եղբայր Նեքտանեբայ հօր (անվատահավատ արտահայտող բառ՝ համարելոյ, կոչեցելոյ) Աղեքսանդրի»: Անվատահավատ արտահայտող բառի անկմամբ վիճակը կփոխվեր, և Աղեքսանդրի հայր լինելու նախապատվությունը կանցնէր Նեքտանեբոսին: ԱՔՊ-ի

10. ՏԼ՝ Ա Ն դրի կյան, էջ 446:

11. ՏԼ՝ 2. Տաշյան. Ուսումնասիրությունը ստույն Կալիսթենեսա Վարուց Աղեքսանդրի. Վիեննա, 1892, էջ 15:

12. 2. Տաշյան. նշվ. աշխ., էջ 74:

կազմողը ստիպված այդպես էլ ընկալել է, և, որպեսզի նույն մարդու համար երկու հայր շտապվեր, Փիլիպպոսի կողքին է դրել անվստահություն արտահայտող բառը՝ «Փիլիպպեան կռչեցեալ», այն հաշվով, որ վերջինս դրան տա մականվանային ինչ-որ նշանակություն:

Նույն խաթարված վիճակն է հղել հավանաբար նաև Դրասխանակերտցու ձեռքի տակ ևղած Խորենացու բնագրում, և նա հարցը լուծել է Փիլիպպոսին ընդհանրապես դուրս հանելով [3]¹³:

ԱՔՊ-ի սկզբնատողերը կարող էին գրվել միայն Խորենացու Պատմության գիտելիքների ոլորտից ելնելով, հասկանալի և ըացատրելի են դառնում այդ միջավայրում:

դ) ԱՔՊ-ի մեջ Խորենացուց է գալիս նաև Կեսարիայի նախապես Մաժաբ կոչված լինելու մասին գիտելիքը [2]: Պատմահայրը շատ լավ գիտի և հետևում է այս բաղաբի պատմությանը հիմնադրման օրից: Այն հիմնադրել էր Արամի Մաժաբ անունով կողմնապետը և կոչել իր անունով (Խ., Ա, ԺԴ, 47): Առաջին իսկ հիշատակման առիթով Խորենացին ծանոթագրում է, որ այն հետագայում վերաշինվել է ուրիշների կողմից և կոչվել Կեսարիա: Բայց շնայած դրան, մինչև վերաշինման փաստն իր տեղում արձանագրելը նա հետևողականորեն քաղաքը կոչում է Մաժաբ անունով, ապա միայն նոր՝ Կեսարիա: Իսկ վերանվանումը տեղի էր ունեցել հենց Տիգրան Միջինի ժամանակ, նրա քրոջ որդու՝ Միհրդատ Կրտսերի կողմից: Այս վերջին տեղեկությունը, որ գրտնում ենք 2—3 էջ հետո, հեշտությամբ կարող էր իմանալ ԱՔՊ-ն կազմողը և այդ հիման վրա ծանոթագրել «Միծաֆ ֆաղաֆի, ու ալմ կռչի Կեսա-րիա» [2]:

ե) Միհրդատի մասին Խորենացու վկայությունները երեքն են: Առաջին երկուսը բավականին հանդիսավոր ներկայացնում են նրա մուտքը, սակայն գրանցում նա ինքը դեռ ոչինչ չի անում, այլ ընդամենը շնորհներ է ընդունում: Այսպես. Տիգրանի հայրը՝ Արտաշեսը «զդուստր իւր զԱրտաշատայ տայ կին Միհրդատայ ումեմն վրաց բղելիս մեծի, որ էր ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի... և հաւատայ նմա զկողմնակալութիւն հիւսիսային լե-րանցն և Պոնտոս ծովու» (Խ., Բ, ԺԱ, 121): Այնուհետև՝ Տիգրան Միջինը «ի քեռայր իւր Միհրդատ հաւատացեալ զՄաժաբ և զհոգս Մէջերկրայցն և զօր բաղում թողեալ առ նմա, դառնայ յաշխարհս մեր (Խ., Բ, ԺԴ, 127): Երրորդ՝ վերջին վկայությամբ, Միհրդատը դուրս է գալիս իրադարձությունների թա-տերաբեմից, բայց դա արդեն նշանավոր, վաստակած, հռոմեացիների համար խիստ վտանգավոր անհատի հանդիսավոր ելք է. Պոմպեոսը Տիգրանի դեմ ուղարկում է իր զորավար Սկավրոսին, իսկ Միհրդատի դեմ հարկ է համարում գնալ անձամբ. «Իսկ Պոմպէի պատերազմեալ ընդ Միհրդատայ տեսանէ սաս-տիկ ընդդիմտակացութիւն և ահագին մարտս և վտանգի յոյժ»: Ու թեև Միհրդատն է պարտվում և փախչում Պոնտոս, բայց ըստ էության փախուստի է դիմում նաև հաղթողը՝ «յորմէ իբրև զերծեալ Պոմպէոս, որում ալն ոչ ունէր...» և, դիմում դավի՝ «ի ձեռն հօրն Պիղատոսի Պոնտացույ զՄիհրդատ սպանանէ թունաւոր դեղովք»: Միհրդատի մահվան լուրը ավետիք էր Պոմպեոսի համար. Խորենացին առ այդ բերում է Հովսեպոսի վկայությունը. «Պոմպէի հուպ յմիբրով հասանեն աւետիք մահուանն Միհրդատայ» (Խ., Բ, ԺԵ, 129—130):

Պարզ զգացվում է, որ այստեղ խոսքը Հայոց թագավորի սովորական բղելի մասին չէ սոսկ, այլ շատ ավելի կարևոր ու վաստակաշատ մեկի, որի վաստակի մասին, սակայն, բիշ բան կա: Այսինքն՝ Միհրդատի մուտքի

13 Դրասխանակերտցին շատ լավ գիտի Խորենացուց, որ «տիեզերակալ Աղեքսանդրը Փիլիպպոսի որդին է, և նույնիսկ ունի «Աղեքսանդր Փիլիպպեայ» ձիւտ ձեւը (Դ—23): Ոսկայն այնքան ուժեղ է հղել այս սխալի հետևանքով նրա մեջ առաջացած պատկերացումը, որ երբ Խորենացին Աղեքսանդրին առանց հայրանվան է հիշատակել, նա վստահ ավելացրել է «որդ-ւոյն նեքտաներայ» (Դ—14):

և ելքի հանդիսավորությունը անհամամասնական են նրա գործերուն և ենթադրում են, որ նա հորենացու բնագրում ավելի մեծ շահով պետք է ներկայացած լիներ իր գործունեությանը: Ինչպես ԱՔՊ-ից, այնպես էլ Դրասխանակերտցու համապատասխան հատվածից հստակ երևում է, որ դրանց հիմք աղբյուրում հիմնական նյութը եղել է Միհրդատի գործունեությունը, մասնավորապես, Ամասիա քաղաքի հետ կապված դրվագը:

Խորենացու Պատմության մեջ նկատվող հիշյալ անհամամասնությունը զգալիորեն կարող էր հարթել ԱՔՊ-ի համար հիմք հանդիսացած, սեր ենթադրած հատվածը: Պետք է մանավանդ նկատի ունենալ, որ վերջինս կարող էր ավելի ընդարձակ լինել և պարունակել Միհրդատի գործունեության մասին այլ տեղեկություններ ևս, որոնք չկապվեին Ամասիա քաղաքի հետ և դուրս թողնվեին:

զ) Եթե դատելու լինենք ԱՔՊ-ի և Դրասխանակերտցու սկզբնական, ապա Խորենացու բնագրում մեր ենթադրած կորուստը պետք է պարունակեր Միհրդատի գործունեությունը ներկայացնող ու ամփոփող միջանկյալ բնույթի մի հատված կամ գլուխ, ուստի նրա դուրս ընկնելը կարող էր նաև աննկատ մնալ: Սակայն Խորենացու Պատմության ներքին փոխկապակցվածությունն ու համակարգվածությունը նման հնարավորությունը նվազագույնի են հասցնում: Եվ իրոք, այս տեսանկյունով դիտարկումը ի հայտ է բերում բնագրից կորուստ, բնագրի խզում վկայող նաև առարկայական ու շոշափելի փաստերը: Ինչպես ասացինք, Միհրդատի մասին Խորենացու վկայությունների հանդիսավորությունը հուշում է, որ նրա դերը Տիգրանի ժամանակ շատ ավելի մեծ է եղել: Դրա հետ կապված արդյոք նա ավելի բարձր պատվի՝ պաշտոնի չի՞ արժանացել, քան այն, ինչ ստացել էր արդեն նրա հոր՝ Առտաշեսի ժամանակ՝ «կողմնակալություն հիստասային լերանց և Պոնտոս ծովում» (Խ., Բ, ԺԱ, 121): Եթե դա եղել է, ապա ԱՔՊ-ն պետք է որ պահպանած լիներ թեկուզ ինչ-որ հետքեր: Այստեղ նա կոչվում է կողմնապետ [2]: Նոր հավագյալ բառարանը հավասարության նշան է դնում կողմնապետ և կողմնակալ տերմինների միջև¹⁴: Խորենացու վկայությունները, կարծում ենք, դրանք տարբերակելու հիմք են տալիս: Նա երկրի ծայրամասերում թագավորների նշանակած պաշտոնյաների համար սովորաբար գործածում է «կողմնակալ», նրանց վստահված շրջանի համար՝ «կողմնակալություն» տերմինները (Խ., Ա, ԻԱ, 66. Բ, է, 109. Բ, Ը, 113. Բ, Գ, 105): «կողմնապետ»-ը նա օգտագործում է երկու անգամ: Այդպես է կոչվում Մշակը (Խ., Ա, ԺԳ, 46): Սա տվյալ դեպքում հետաքրքիր է նաև նրանով, որ Մշակի իշխանությանն է հանձնվում նույն Մածաթի շրջանը: Երկրորդ վկայության մեջ արդեն հստակ շեշտված է «կողմնապետ»-ի անհամեմատ բարձր դիրքը և իշխանության մեծությունը: Շամիրամը երկրից բացակայելու դեպքում «կողմնապետ և վերակացու Լևոս-րեստանի և Նինուէի թողու զՋրադաշա մոգ և նահապետ մարաց» (Խ., Ա, ԺԷ, 55): Նման վստահության կարող էր արժանանալ թագավորից հետո երկրորդ մարդը: Ուրեմն՝ ԱՔՊ-ի մեջ Միհրդատի «կողմնապետ» կոչվելը պատահական չէ, այն փոխարինել է «կողմնակալ»-ին՝ վերջինիս նկատմամբ ավելի բարձր դիրք նշելու համար: Առայժմ տրամաբանականության ոլորտում գտնվող մեր եզրահանգումը առարկայական հոգի վրա է զրկում Խորենացու փոքրիկ մի վկայության շնորհիվ, որը գտնում ենք հետագա դեպքերի նրա շարադրանքում: «Քանզի էր Երուանդայ դարձուցեալ ի նա զգահն Խուրդական, զոր հանեալ էր ի նոցանէ Տիգրանայ և տուեալ իւրում բնութեն Միհրգատայ. իսկ յետ մահուանն Միհրդատայ՝ ոչ լինէր ումեր տուեալ, մինչև Երուանդայ դարձուցեալ զնա առ Արդամ» (Խ., Բ, ԽԳ, 169): Ընդգծվածը նախապես՝ իր տեղում, Խորենացու առկա բնագրում աբձանագրված չենք գտնում:

¹⁴ Տե՛ս Նոր բառգիրք հայկազան լեզուի, Ա, էջ 1112,

է) ն. Անդրիկյանը Դրասխանակերտցու Պատմությունից բերում է մի հատված, գտնելով, որ դրա համար աղբյուր է ծառայել ԱՔՊ-ն [2, 3]¹⁵։ Հուգարդությունը պարզ ցույց է տալիս, որ այդ հատվածի առաջին երկու նախադասությունները բացարձակապես կապ չունեն ԱՔՊ-ի նյութի հետ, և ընդհակառակը՝ բխում են անմիջապես Խորհնացուց։ Երրորդ նախադասությունը նույնպես Խորհնացուց է պատճենված, չնայած նույն միտքն ունի նաև ԱՔՊ-ն, Շարունակությունը՝ Ամասիա քաղաքի հիմնադրությունը, Միհրդատի կողմից «ի Հայս» դրավելու և վերաշինելու սասին տեղեկությունները, ժայռափոր կառույցների նկարագրությունը իրոք համընկնում է ԱՔՊ-ի հետ։ «Խաղանաթ Դեղփայ» յառերով Անդրիկյանը ընդհատում է Դրասխանակերտցույց կառարած բաղվածքը։ Դրասխանակերտցու հաջորդ հաղորդումը Տիգրանի Պաղեստին կատարած արշավանքի մասին [4] դուրս է ԱՔՊ-ի ոլորտից։ Սակայն դրան հաջորդող իրադարձությունները՝ Պոմպեոսի դեմ Միհրդատի պայքարը, պարտվելը, Պոմպեոս փախչելն ու այնտեղ սպանվելը շատ սեղմ ունի նաև ԱՔՊ-ն [5]։ Հոգվածագիրն իրավացիորեն այն չի ներկայացրել, որպես նույն փաստերի մասին Դրասխանակերտցու շարադրանքի աղբյուր, բունի որ վերջինս իր մանրամասնությամբ և ընդարձակությամբ շատ ավելի ղեկավարվում է ԱՔՊ-ի հաղորդմանը և ընդհակառակը՝ լրիվ տեղափոխում է Խորհնացու շրջանակներում, ճշգրիտ համընկնում նրա վկայություններին։ Անհասկանալի է, թե ինչու Անդրիկյանը այս նույն նկատառումով մի կողմ չի թողել Դրասխանակերտցու նաև առաջին երեք նախադասությունները [2]։

Կարող էր ԱՔՊ-ն առանձին մատենագրական միավոր լինելով այս ձևով մտնել Դրասխանակերտցու Պատմության մեջ։ Դա կնշանակեր, որ կաթողիկոս պատմիչը դրա մեջ հույժ կարևոր նյութ է տեսել և անհրաժեշտ է համարել դրանով լրացնել իր հիմնական աղբյուրը։ Սակայն Դրասխանակերտցին շատ հազվադեպ է կարիք զգում Խորհնացուն լրացնելու համար դիմել այլ աղբյուրների։ Սակավաթիվ նման փաստերի քննությունը ցույց է տալիս, որ դա ունեցել է որոշակի արտահայտված նպատակադրում, այն է՝ բարձրացնել ու փառաբանել Հայոց եկեղեցին և նրա ներկայացուցիչներին, այս լնագավառի սկզբունքային որոշ հարցեր ներկայացնել նոր հայեցակետով ու մեկնաբանությամբ¹⁶։ ԱՔՊ-ի պարունակած նյութը այս խնդիրներից որևէ մեկին կապվել չի կարող։ Ավելին. Խորհնացու Պատմությունը համառոտալիս նա աշխատում է շրջանցել որոշ բնագավառներ, որոնցից են նաև շինարարական բնույթի նյութերը։ Ուրեմն, ոչ մի հիմք չկա մտածելու, թե ԱՔՊ-ի պարունակած տեղեկությունները հատուկ կարևորության շնորհիվ կարող էին այլ աղբյուրից մուծվել Դրասխանակերտցու Պատմության մեջ։ Միայն իր հիմնական աղբյուրի՝ Խորհնացու Պատմության մեջ լինելով, դրանք կարող էին այստեղ հայտնվել, և այն էլ որպես արդյունք հեղինակի ամփոփուման սկզբունքների որոշ անհատեղականության։

Անդրիկյանը իրավացի նկատում է, որ ԱՔՊ-ն ստեղծվել է ոչ թե առանձին զույգության իրավունքով, այլ կցվելու համար Թեոդորոս Զորավարի վարքին։ Այսինքն, եթե այն որպես այդպիսին լիներ էլ Դրասխանակերտցու ձեռքի տակ, ուսում պետք է լիներ վարքին կցված վիճակում։ Ինչպես տեսանք, բուն վարքից նրա Պատմությունը որևէ հետք չունի։ Նույն դարում ունենք նաև հակառակ իրավիճակ։ Ուխտանեսը բավականին ընդարձակ վերապատմում է այս վարքը, բայց նա էլ որևէ հետք չունի ԱՔՊ-ից¹⁷։ Սա հազիվ թե պատա-

¹⁵ Տե՛ս Անդրիկյան, էջ 445։

¹⁶ Տե՛ս Ա. Բ. Սարգսյան. Հայոց հին պատմության արտացոլումը Հովհաննես Դրասխանակերտցու երկում. Երիտասարդ արևելագետների 9-րդ գիտական նստաշրջան (ղեկ. Թեդիսեն) Երևան, 1983, էջ 19։

¹⁷ Տե՛ս Ուխտանես և պիսկոպոս. Պատմութիւն Հայոց. Վաղարշապատ, 1871, էջ 65—66։

հաճանության արդյունք կարելի է համարել: Նշանակում է, թե Ուխտանեսը մառոտ ունեցել է առանց ԱՔՊ-ի, իսկ Դրասխանակերտցին՝ ԱՔՊ-ն առանց վարքի: Եթե կցումը դեռ չէր եղել, ուրեմն չէր կազմվել նաև ԱՔՊ-ն, և Դրասխանակերտցուն այս տեղեկությունները կարող էին ծանոթ լինել միայն ԱՔՊ-ի աղբյուրից:

Թ) Հայկական մատենագիտությունը տեղեկացնում է, որ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից մի քանիսը Թեոդորոս Զորավարի վարքի խորագրում կրում են «ի Մովսէսի Պատմութենէ» հավելումը¹⁸: Անդրիկյանի օգտագործած երեք և Մատենադարանի շորս ձեռագրերը ունեն խորագրի հետևյալ տարբերակները.

1) Յիշատակ է սրբոյն Թէոդորոսի Զաւրաւարին ծննդեանն և վարուց նորա ի Մովսէսի Պատմութենէն¹⁹:

2) Յիշատակ սուրբ վկային Թէոդորոսի, որ յաղուհացքն տաւնեն ի Մովսէսի Պատմութենէն ծննդեանն և վարուցն²⁰:

3) Յիշատակ սուրբ Զօրաւարին Թէոդորոսի յայլմէ պատմութենէն²¹:

4) Վկայաբանութիւն սրբոյն Թէոդորոսի և Պատմութիւն Ամասիոյ քաղաքին²²:

5) Պատմութիւն Թէոդորոսի ծննդեանն և սննդեանն²³:

6) Սրբոյն Թէոդորոսի ծննդեանն և սննդեանն և վարուց նորա²⁴:

7) Պատմութիւն սրբոյն Թեոդորոսի ծննդեանն և սննդեանն և գեղեցիկ քաղաքավարութեանն²⁵:

«Ի Մովսէսի Պատմութենէն» անշուշտ վերաբերում է խորհնացու Պատմությանը: Կարծում ենք, որ առաջին և երկրորդ դեպքերում գործ ունենք ԱՔՊ-ն կազմողի և վարքին կցողի վերնագրման ու նրա մի տարբերակի հետ: 1-ին վերնագրում «ի Մովսէսի Պատմութենէն» բնականաբար չէր կարող ամբողջ վարքին վերաբերել: Այն ենթավերնագրի ձևով ավելացել է բուն խորագրին, ցույց տալու համար սկզբից վարքին կցվող նոր նյութի աղբյուրը: Երկրորդ դեպքում վերնագիրը համապատասխանեցված է նրա տակ շարադրված նյութի հաջորդականությանը. «Յիշատակ սուրբ վկային Թէոդորոսի, որ յաղուհացքն տաւնեն» պետք է հասկանալ որպէս ընդհանուր վերնագիր, որին հետևում են երկու ենթավերնագրեր՝ ա) «ի Մովսէսի Պատմութենէն», բ) «Սննդեանն և վարուցն»²⁶: Վերջին երեք դեպքերում ԱՔՊ-ն որպէս կցված մաս մատնանշող ոչինչ չկա: Այս վիճակը կարող էր գալ և այն ժամանակվանից, երբ վարքը առանց ԱՔՊ-ի էր, կամ պարզապէս ավելի ուշ հանված լիներ ԱՔՊ-ի կցման առիթով վերնագրում կատարված հավելումը: Մտածել, թե «ի Մովսէսի Պատմութենէն» ծանուցման հեղինակը ԱՔՊ-ն կաղմողն ու Թեոդորոսի վարքին կցողը չէ, անհիմն կլինի: Ենթադրենք, թե հետագա որևէ ձեռնհաս գրիչ նկատել է, որ վարքի սկզբի մասը ինչ-ինչ ընդհանրություններ ունի խորհնացու Պատմության հետ, սակայն առանց վերջինիս մեջ այն փնտրելու, առավել ևս փնտրելուց և չգտնելուց հետո, իրեն իրավունք չէր վերապահի վերնագրում կատարել այդ հավելումը: Մինչդեռ հակառակ ուղղությամբ խմբագրում, այսինքն՝ խորհնացու Պատմությանից քաղված լինելու մասին վկայության դուրս թողնելը վերնագրից, հասկանալի և տրամաբանական:

18 Հ. Ա. և ս. յ. ն. Հայկական մատենագիտություն. հ. Ա, Երևան 1959, էջ 637:

19 Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձև. № 993, էջ 288 ր:

20 ՄՄ, ձև. № 942, էջ 45ա:

21 ՄՄ, ձև. № 996, էջ 327 ր:

22 ՏՃՍ Անդրիկյան, էջ 443:

23 ՏՃՍ նույն տեղում, էջ 442:

24 ՄՄ, ձև. № 1525, էջ 225 ա:

25 ՏՃՍ Անդրիկյան, էջ 443:

26 Անշուշտ չի բացառվում, որ ԱՔՊ-ն կաղմողը և վարքին կցողը «ի Մովսէսի Պատմութենէն» նշումը դրած լիներ լուսանցքում որպէս ծանոթագրություն, իսկ բնագիր (վերնագիր) մուծին հաջորդ ընդօրինակողները:

կլինի: Այդ ևն վկայում վերնագրերի 3-րդ և 4-րդ տարբերակները: Կասկած չի կարող, որ 3-րդ դեպքում «չալմէ պատմութենէն»-ն փոխարինում է «ի Մովսէսի Պատմութենէն»-ին: Հավանաբար խմբագրող հեղինակը խորհնացու Պատմության մեջ փնտրել և չի գտել տվյալ հատվածը, ուստի և կատարել է այդ փոփոխությունը: 4-րդ դեպքում խմբագրող գրիչը ելել է շարադրելիս նյութի բովանդակությունից:

Այսպիսով, ձևադրական նյութերը հիմք են տալիս ասելու, որ ԱՔՊ-ն կազմող և Խնդորոսի վարքին կցող հեղինակը որպես դրա աղբյուր ներկայացրել է Մովսէս խորհնացու Պատմությունը:

Բերված փաստերն ու բացատրությունները հանգեցնում են այսպիսի հետևություն. Ամասիա քաղաքը Միհրդատի կողմից գրավվելու և վերաշինվելու պատմությունը նույն քաղաքի հիմնադրման հետ կապված պատմական էրևակության հետ միասին նախապես եղել է խորհնացու Պատմության մեջ որպես մի ամփոփ հատված կամ գլուխ, որից օգտվել է Դրասխանակերտցին: Ի որը, դրանից անկախ, որոշ մշակման ենթարկվելուց հետո, հարմարեցվել ու կցվել է Թեոդորոս Զորավարի վարքին, որպես նրա գործունեության կենտրոն Ամասիա քաղաքին վերաբերող պատմական տեղեկանք:

Այժմ անդրադառնանք մի քանի հարցերի, որոնք կարող են նման ենթադրության համար առարկության տեղիք տալ:

Նախ պետք է բացատրել ԱՔՊ-ի այն տեղիների առկայության փաստը, որոնց ղուղահեռը խորհնացու Պատմությունը ունի նաև այսօրվա վիճակում, նկատի ունենալով, որ Պատմահոր պատմագիտական ճաշակի համար խորթ են նման կրկնությունները: Դրանք են. Միհրդատը Հայոց թագավոր Տիգրանի քրեային է և Մովսէսում նշանակված պաշտոնյան, Մաթաթը նույն Կեսարիան է [2], Միհրդատը պարսկացի է Պոմպեոսից, փախել Պոնտոս և մահացել այնտեղ [5]:

Եթե մեր ենթադրած կորուստի մասին դատելու լինենք ԱՔՊ-ի և Դրասխանակերտցու միջոցով, ապա այն եղել է դարգացող պատմական դեպքերի հետ ոչ շատ սերտ կապված, միջանկյալ բնույթի մի պատմություն, որի լինելը կարող էր չխախտել կենտրոնական իրադարձությունների հաջորդական ուղղաճիգն ու կապը: Սակայն նաև այսպիսի մի հատված, երբ պոկվեր մայր միջավայրից և կցվեր այլ բնագրի, բնական է, որ պետք է անհրաժեշտություն առաջանար այն օժտել որոշ ծանոթագրություններով, բանի որ այստեղ հիշատակված պատմական անունները և այլն արդեն բավարար չափով հասկանալի չէին լինի նոր ընթերցողին՝ մինչ այդ ներկայացված լինելու պատճառով: Վերահիշյալ համընկնումները պայմանավորված են հենց այս անհրաժեշտությամբ: Այստեղ նորից նկատենք, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր եղել կամ անհրաժեշտ համարվել համապատասխան ծանոթություն թողնել, ուստի շատ բան այսօր էլ հասկանալի է դառնում միայն խորհնացու Պատմության ընդհանուր եռնախորքում:

Ամասիայում Միհրդատի ժառանգորդ կառույցների նկարագրության նմանությունը Շամիրամի նույնպիսի կառույցների խորհնացու պատկերների հետ բավականին ցայտուն է [3].

Ախլ

...և նախ սպառնալիք մեծամեծ հաստատվի՞ք կանգնեալ վիմօք, և ի վերայ զարքունիսն կանգնեալ. և յարեգակնային դիմի անձալին շիրիմս քարակոփս և ճանապարհս սանդխաձես և տունս քարայրս գանձուց բրածոյս յօրինեալ համանման ձևակերտացրն Շամիրամայ որ ի վան և ի խաղնաթկեփայլս:

Խորհնացի

Եւ հրամայէ նախ դամբարտակ գետոյն սպառնալիք և մեծամեծ վիմօք շինել... Իսկ զընդզմ ա-րեգակն կողմն անձալին... պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս գանձուց և միհս երկարս... հրաշակերտեաց (Խ., Ա, ԺԶ. 52):

հորենացին առանձին բնորոշ բառեր ու արտահայտություններ երբեմն օգտագործում է մի քանի անգամ, տարբեր առիթներով: Այս դեպքում նա թեոքես փոքր-ինչ ավելի առատորեն է օգտված եղել իր նախորդ նմանատիպ նկարագրությունից: Հավանաբար «համանման ձեռակերտին Շամիրամայ, որ ի վան» համեմատությունը անելու և այն ավելի հիմնավոր ու տպավորիչ դարձնելու համար է, որ նա դիմել է նման մի նուրբ քայլի:

ԱՔՊ-ի մեջ հանդիպող հատուկ անունների մի մասը ծանոթ է հորենացու Պատմությանը, մի քանիսն էլ չեն հանդիպում: Վերջիններիս մասին ասացինք, որ դրանք կարող էին միայն մեկ անգամ օգտագործված լինել: Հենց այս հատվածում և դուրս մնային նրա հետ միասին: Նույն բանը չի կարելի ասել հազնաթկեփայս (ըստ Դրասխանակերտցու՝ հազնաթ Գեղփայ) տեղանվան մասին: Դրա հետ կապված կա կարևոր վկայություն, որ ունի և՛ ԱՔՊ-ն, և՛ Դրասխանակերտցին, այն է՝ Շամիրամի այստեղ կառուցել է այնպիսի ժայռափոր ապարանքներ, ինչպիսիք կան վանում: «Համանման ձեռակերտացն Շամիրամայ, որ ի վան և ի հազնաթկեփայս (հազնաթ Գեղփայ)»: Ըստ այսմ, հորենացուն պետք է ծանոթ լիներ և՛ տվյալ տեղանունը, և՛ այնտեղ Շամիրամի անվան հետ կապված ժայռափոր կառույցներ լինելու մասին տեղեկությունը: Հնարավոր է այդ:

Ղ. Ալիշանը խնդրո առարկա տեղանվան մասին ունի հետևյալ ծանոթությունը. «...որ է հիմա Հըսն-քեյֆ կոչված քաղաքն, Տիգրիս գետո մոտերը, քիչ հեռի Հայոց սահմաններեն: Ասոր քարակոփ շենքերն ծանոթ չեն՝ ինչպես հիշյալքն Ամասիո և Վանա... արժանի է հետաքննության և Հըսն-քեյֆ»²⁷: Մինչդեռ լեհման-Հաուպտը մի քանի տարի հետո (1910 թ.) լույս ընծայած իր գրքում արդեն խոսում է այս քաղաքում գտնված բազմաթիվ նմանատիպ շինությունների մասին²⁸:

Հետաքրքիր է, որ դարերի խորքն են իջնում այս տեղանվան արմատները: Գիտական գրականության մեջ Հիսն Քեյֆը նույնացվում է ասորեստանյան արձանագրությունների Կիպանի-ի հետ. «866 թ. Աշուրնասիրսուլար Տիգրիսն անցնելուց հետո կանգ է առնում Կիպանի երկրում, որ Արևմտյան Տիգրիսի վրա գտնվող Հիսն Քեյֆ մարզն է, հուզիսիմա քաղաքում»²⁹ (ընդգծումն իմն է—Ա. Ս.): Ըստ Մարկվարտի, հույն հեղինակներն այս տեղանունը հիշատակում են որպես կարևոր ամրություն Cephra, Cephemia, Kephemia ձևերով³⁰: XIII դարի արաբ աշխարհագրագետ Յակուտ-ալ Համավին Հիսն Քեյֆա տեղանվան մասին գրում է. «Այս քաղաքը Քայրա էլ է կոչվում, որ կարծեմ նրա հայերեն անունն է»³¹. որով փաստորեն այդ անվանումը հաղորդված է համարում հայկական ամանդությունով: Մատթեոս Ուռհայեցին ունի Հասնբի³², որ արդեն արաբականացված ձևն է:

Արաբ աշխարհագրագետի հայկական համարած Քայրա-ն իսկույն հիշեցնում է Դրասխանակերտցու հազնաթ Գեղփայ-ի երկրորդ բաղադրիչը, ինչպես նաև հունական աղբյուրների Cephra, Cephemia, Kephemia ձևերը, վերջիններիս միջոցով էլ ասորեստանյան Կիպանի-ն: Հետաքրքիր է, որ այս մարզում հիշատակված հուզիսիմա քաղաքի անունն էլ հնչունական նման:

27 Ղ. Ալիշան. Հայապատում, Բ, էջ 43, ծան. 1:

28 C. F. Lehmann-Haupt. Armenien einst und jetzt. I. Berlin, 1910, S. 376

29 Ն. Արոնց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 73:

30 J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen. Wien, 1930, S. 171, 129.

31 Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան. Երևան, 1965, էջ 52:

32 Տե՛ս Պատմութիւն Մատթեոսի Ուռհայեցու. Երուսաղեմ, 1869, էջ 367:

նություն է դրսևորում հազնաթ-ի հետ³⁸։ Այսինքն, տեղանունը օգտագործվել է երկու բաղադրիչով, ճիշտ այնպես, ինչպես Խորհնացու մեկ այլ կազմություն՝ Վաճ Տապայ (Խ., Գ. ԼԵ, 309)։

ԱՔՊ-ի Խազնաթկեփայս-ը (տարր. Խազնաթդէփս, Բազնաթգեփայ, Խազնաթ Գեփայ, Խազնաթգեփայ, Խազնաթ գետաց) պետք է համարել աղավաղված և սրբագրել Խազնաթ Գեղփայ ըստ Դրասխանակերտցու ավանդած ձևի։ Սեպագիր շրջանից մինչև Դրասխանակերտցի և ԱՔՊ տվյալ տեղանվան ավանդման ճանապարհին պետք է լինեն անհրաժեշտ փոխանցող ևս մի օղակ, և այն եղել է Խորհնացին։

Վանի ժայռափոր կառույցները Շամիրամին վերագրելու վարկածը Խորհնացուն է հասել ժողովրդական ավանդությամբ։ Եթե մի անգամ արդեն նման հանրահայտ անձի շուրջ հյուսված ավանդությունը նրան է վերագրում այդպիսի ինքնատիպ շինություններ, ապա շատ հնարավոր է, որ պատմաաշխարհագրական և լեզվամշակութային նույն միջավայրում այդ ավանդությունը Խորհնացու էր, և պետք է որ նույն անձի հետ կապեր նմանատիպ նշանավոր այլ շինություններ ևս։ Այսինքն, Խորհնացուն հասած ավանդությունը կարող էր տեղեկություններ ունենալ նաև «Խազնաթ Գեղփայում» Շամիրամի «հրաշակերտած» ժայռափոր ապարանքների մասին, ինչը, որևէ տեղ հարմար չդիտելով, Պատմահայրը հաղորդել էր Ամասիայի նույնպիսի կառույցների հիշատակման առիթով։

Եթե Խորհնացու ընթացիկ իրոք հատված է դուրս ընկել, պետք է որոշել նաև նրա տեղը։ Տեղադրելուն կարող է օգնել Դրասխանակերտցին, քանի որ վերջինս այս աղբյուրից իր բաղած նյութը սովորաբար շարադրում է նույն հաջորդականությամբ։ Բայց ըստ այդմ ստացվում է, որ Ամասիայի և Միհրդատի մասին այս պատմությունը պետք է եղած լինեն Բ գրքի ԺԴ դիսի առաջին պարբերությունից [2] հետո, ճիշտ այնտեղ, որտեղ այժմ պատմվում է Տիգրանի մեհենաշինական գործերի մասին։ Վերջինս, թեև միջանկյալ մի պատմություն է և անմիջապես չի կապվում զարգացող քաղաքական իրադարձություններին, սակայն իր տեղում շատ ամուր է։ Կաթողիկոս պատմիչը, ճիշտ է ոչ հաճախ, բայց անհրաժեշտ համարած դեպքում նաև աղբյուրի նյութի որոշ վերադասավորություն է կատարում։ Թվում է, Խորհնացու Պատմության Բ գրքից դուրս է ընկել ամբողջ մի գլուխ, որը հաջորդել է այսօրվա ԺԴ-ին։ Դրասխանակերտցու համար Տիգրանի մեհենաշինական և կուռքերի տեղավորումների հետ կապված գործերը հեռու պետք է լինեին կարևոր դիտվելուց, և նա դրա տեղում կարող էր տեղադրել հաջորդ ամփոփ նյութի համառոտումը, որը ոչ միայն հանգիստ կարող էր տեղավորվել այդտեղ, այլև հիանալի կապվել գլխի սկզբում և վերջում ներկայացվող դեպքերին։

38 Հավանաբար նույն տեղանվան հետ գործ ունենք նաև Սարգուրե II-ի մի արձանագրության մեջ։ Դեպի Միլիտեա արշավանքից հետո այս երկրի թագավորը նրան է դիշում ինը ամրոց։ Մեկը շրջափակված էր այսպես. «9 крепостей я оттуда отторгул (и) црнсоадышил к моеи стране (крепости) городов Хазани, Гаурахн, Тумншкн, Асагн, Манну, Арушн, Кулбнтапннн, Таше, Куеранташе, Мелуаннн» (Г. Мелнкншнлн. Урартские клинообразные надписи. М., 1960, с. 307—308)։ նկատենք, որ այստեղ 9-ի փոխարեն թվարկված են 10 անուն, որ նշանակում է. թե զրանցից որևէ դույզ վերաբերում է մեկ ամրոցի։ Առաջին երկուսը՝ Խազնաթ և Գաուրախի հնչյունական նմանությունն է մի կողմից ասորեստանյան արձանագրությունների վերոհիշյալ Խուդիբիեա Կիպանի-ի հետ և մյուս կողմից հայկական Խազնաթ Գեղփայի։

ПОПЫТКА ВОССТАНОВЛЕНИЯ ФРАГМЕНТА
ИСТОРИИ МОВСЕСА ХОРЕНАЦИ

А. Б. САРГСЯН

Резюме

Историк X в. Ованес Драсханаке́ртци, пересказывая отрывок Истории Мовсеса Хорена́ци (V в.), повествующий о деяниях Тиграна Среднего (исторический Тигран Великий), сообщает также сведения, касающиеся основания Амасии Понтийской, а также захвата и дальнейшей застройки города зятем Тиграна Митридатом, которых нет в вышеназванном источнике. Этот фрагмент обнаруживает очевидную связь с небольшим сочинением, приложенным к началу жития Феодора Полководца (Теодорес Зоравар), жившего в Амасии Понтийской, — «История города Амасии и о воспитании Феодора Полководца». Последнее же сочинение в свою очередь имеет тесную лексическую и стилистическую связь с Историей Хорена́ци. Н. Андри́кян, исследуя эту связь, пришел к выводу, что и Мовсес Хорена́ци, и автор «Истории города Амасии» имели некий третий неизвестный источник. Драсханаке́ртци же использовал «Историю города Амасии». Подробный сопоставительный анализ трех текстов, выявленные определенные принципы использования источника Ованесом Драсханаке́ртци, а также рукописный материал позволяют выдвинуть другую, более вероятную гипотезу. Очевидно, в тексте Истории Хорена́ци после 14 главы II книги первоначально помещался фрагмент (возможно, отдельная глава), повествующий о названных событиях, который и использовали, с одной стороны, Ованес Драсханаке́ртци, с другой — автор «Истории города Амасии».